օրերի յիշողութեամբ է ապրում.

Ա՜խ, իմ անո՛ւշ, ոսկի՛ օրեր,
Երազի պէս դուք անցաք.
Ինչպէս տաւղի քնքուշ լարեր
Ձայն տուեցիք ու անցաք:
Հանգաւ իմ խանդ, սէր ու աւիւն,
Սիրտս թօշնեց գերդ ծաղիկ.
Խլեց ինձնից մռայլ աշունն
Իմ անուրջներ գեղեցիկ...

5.— ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԻՇՏԸ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Դեռ հաղիւ պատանեկութեան քաղցր օրերը ճաշակած, երիտասարդ հասակի երազներով դեռ նոր տարուած, մեր բանաստեղծը զգում է, որ վաղանցուկ են այդ գեղեցիկ, «ծաղկավառ օրերը»: Նա նախազգում է, որ շուտով «չարագուժ ամպերը» պիտի պատեն իր «սիրուն գարնան երկինքը»: Արեւը, որ հիմա պայծառօրէն ժպտում է կենսալիր բանաստեղծին, միայն պատիր յոյսեր է խոստանում դալիք օրերի համար: Այն վառ, այն չքնաղ պատկերները ,որ բանաստեղծի բորբոքուած երեւակայութիւնը ստեղծում է այսօր, այդ ամէնը վաղը «չքանալու է ծուխի նման»: Սիրելիի գուրգուրած պատկերը եւս ցնդելու է երազի պէս: Եւ ահա, ա՛յդչափ վաղ սկսում են տատանումի ժամերը բանաստեղծի համար: Սիրոյ ծաղիկը այլեւս նրան չէ ժպտում կենսուրախ ու վառ ժպիտով, այլ՝ «թօշնած, մի հիւանդ ժպտով» միայն: Նա զգում է, որ «փոթորիկը շուտով պիտի պայթի» իր գլխին: Եւ, երերեալ ու տատանեալ, կորցրած ո՛չ միայն հանրային, այլ եւ անհատական յենարանը, յանձին սիրած էակի, բանաստեղծը ինքզինքը նմանեցնում է ծովն ընկած անյոյս լուղորդի. նա չգիտէ՝ արդեո՞ք դոռ ալիքները իրեն միւս ափը պիտի հանեն: Միակ մխիթարութիւնը, որ նա այդ իսկ վիճակի մէջ գտնում է, իր երիտասարդութեան ծաղկավառ, բայց վաղանցուկ օրերն են, որոնց օրհնութի՛ւն է կարդում նա այս ժամին («Գեղեցիկ Օրեր»):

Մի ուրիշ ոտանաւորում եւս («Ամենայն անգամ») արտայայտուած ենք գտնում նման տրամադրութիւններ: Բանաստեղծը կամենում է կրկին ու կրկին, միայն ու միայն սէ՛ր երգել, երգել «անուշ ժամերը անամպ խնդութեան», «կենդանի հրճուանք կուսական սրտի»,

Բայց՝ միշտ ակամայ լարերը բեկբեկ
Տխուր են հնչում օրհներգը սիրոյ,
Էլ չէ երեւում ինձ սէրը երբեմ
Իբրեւ վառ գեղմունիք երջանիկ հոգւոյ:

Եւ կամ այս քառեակը մի ուրիշ ոտանաւորի մէջ («Հրաշալի՛ Գիշեր»).—

Եւ սիրտս մանուկ մի այսպէս գիշեր
Ես զոհ բերեցի նենգաւոր կուսին.
Էլ այնուհետեւ անցան տարիներ,
Հանգիստ չտեսաւ իմ տանջուած հոգին:

Կոյսի սիրոյ մէջ էր որոնում մի ժամանակ բանաստեղծը իր կեանքը, իր երազները. իսկ այսօր՝ այդ կոյսը դարձել է «նենգաւոր»: Բանաստեղծը չունի ոչ իսկ ընկեր, որին մատնակից անել կարենայ իր վշտին ու տառապանքին: «Լո՛ւռ կաց», դիմում է նա իր սրտին, «ուրիշներին ասիսո՛ս է մեր ցաւն յայտնենք»: Դարը իր ընկերն է մինչեւ գերեզման:

Գետի երեսն ընկած տաշեղ՝
Մենք զնում ենք հա առաջ.
Հանգիստ չունինք եւ ո՛չ մի տեղ,
Լսող չկայ մեր հառաչ:
(«Լո՛ւռ կաց, սիրտ իմ»):

Եւ այսպէս, անհատական վառ սիրոյ եւ երջանկութեան օրերին շատ շուտ են յաջորդում լքման ու վշտի օրերը: Ու դրա աղբիւրը ո՛չ միայն անհատական, այլ եւ հանրային բնոյթ է կրում: Առաջինին ծանօթացանք, այժմ տեսնենք վերջինը: Այդ տրամադրութիւնը արտայայտուած ենք գտնում «Ամենայն անգամ» ոտանաւորի վերջին չորս տողում: Այժմ՝ մուսան բանաստեղծի ականջին չչնջում է հանրային վշտի ա՛յս ձայնը.

«Այնտեղ, ուր արցունք, շղթայ եւ աւեր,
Ուր լսւում է լոկ հառաչք լալագին,
Քո քնարիցը թող ուրախ ձայներ,
Ո՛վ թշուառ երգիչ, բնաւ չը լսուին»...

Այսպէս ուրեմն, անհատական վիշտը արդէն տեղի է տուել աւելի մեծ՝ հանրային վշտի առջեւ, մէկի վրայ բարդացել է միւսը: Ի տես հանրային ցաւի, զգայուն բանաստեղծը մոռանում է իր սեփական ցաւը, անհատական